

190

ՓՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ
ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

3K13
9-68

}
Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.
1 0 3 5

12 MAY 2005

K13

-68

ԿՐ.

ՖՐԻԳՐԻԴ ԵՆԳԵԼՈ

14 NOV 2005

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՁԸ
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Գիրքահետեղ քառզ. լիդ լուր.
Հ. Ա. Զ. Ա. Շ. Ա. Ե.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԽՈՎՀՅՈՒՆԻ ՀՈՎԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1935

17 APR 2013

190


Մրագրիչ Ա. Տ.-Մկրտչյան
Տեսն. խմբ. Ա. Խաչատրյան



Գլավլիսի լիազոր Ը-55, հրամ. № 298
Տրամ 5000, պատվեր № 240, ինդիքս ՊՄՁ
ՀԿ



Հայկուսչբատի տպորան, Յերևան,
Ալահվերդյան № 27



446

38

Friedrich Engels
Die Bauernfrage
in Frankreich und Deutschland

ФРИДРИХ ЭНГЕЛЬС
КРЕСТЬЯНСКИЙ ВОПРОС ВО
ФРАНЦИИ И ГЕРМАНИИ

Արմագան, Երևան, 1935

Բութուական և հետադեմ կուսակցություններն ար-
տասովոր կերպով զարմանում են, վոր այժմ զյուղա-
ցիական հարցը սոցիալիստների մոտ հանկարծ և ամե-
նուրեք որակաբգի մեջ և մանում: Ավելի ճիշտ, այդ
կուսակցությունները պետք է զարմանային, վոր այդ
վաղուց չի տեղի ունեցել: Իրլանդիայից մինչև Սիցի-
լիա, Անդալուզիայից մինչև Ռուսաստան և Բուլղարիա
զյուղացին թե բնակչության, թե արտադրության պրո-
ցեսի և քաղաքական հզորության շատ կարևոր գործուն
և ներկայացնում: Արևմտյան Յեվրոպայի լոկ յերկու
շրջաններ բացառություն են կազմում: Բուն Մեծ Բրի-
տանիայում խոշոր հողատիրությունը և զյուղատնտե-
սական խոշոր արտադրությունն ամբողջովին զուրս են
մզել ինքնուրույն տնտեսություն վարող զյուղացուն:
Արևմտյան Պրուսիայում այդ նույն պրոցեսը կատար-
վում է դարեր շարունակ և այդտեղ ել զյուղացին ա-
զելի ու ավելի կամ զրկվում է հողից (wird «gelebt»),
կամ թե տնտեսական ու քաղաքական տեսակետից ան-
կարության և մատնվում:

Վորպես քաղաքական զորության գործուն, զյուղա-
ցին մինչ այժմ աչքի յե ընկել գլխավորապես միայն
իր այն ապատիայով (անտարբերությամբ), վորը պայ-
մանավորվում է զյուղի կղզիացած կյանքով: Ժողովր-
դական լայն մասսաների այդ ապատիան մի ամենա-
հզոր նեցուկ է ներկայացնում վոչ միայն պառլամեն-

տական բարքերի այն ապականման համար, վորտիբում և Փարիզում և Հռոմում, այլև ոռուսական բըռունակալության համար: Սակայն այդ ապատիան բնականադիմարելի չե: Բանվորական շարժումը ծագելուց հետո Արևմայան Յեվրոպայում, մանավանդ այն յերկիրներում, վորտեղ գերիշխում և գյուղացիական թղուկային սեփականությունը (Parzelleneigentum), բուժուազիայի համար բնավ դժվար չեր գյուղացիների ֆանտազիայի առջև սոցիալիստական բանվորներին վորտպիսուացեալիսակի «բաժանարարների» («Theiler») գարձնել կասկածելի և ատելի, վորտեղ քաղաքի ծույր ազան բնակիչների, վորոնք շահագիտորեն նայում են գյուղացու սեփականության վրա:

1848 թ. փետրվարյան հեղափոխության շիոթ սոցիալիստական ձգտումները ֆրանսական գյուղացիների ռեակցիոն քվետումներով արագորեն ջախջախեցին: Զգտելով հանգիստ կյանքի, իր հիշողությունների շտեմարանից գյուղացին դուրս հանեց նաև գյուղացիական կայսր Նապոլեոնի շուրջն ստեղծված առասպելը և հիմնեց յերկրորդ կայսրությունը: Մենք բոլորս իմանում ենք, թե գյուղացու այդ մեկ զործը ֆրունստական ժողովրդին ինչքան թանգ նստեց: Դրա հետեւանքներից զեռ այսոր ել տառապում ե նա:

Բայց այնուհետև շատ բան փախվել ե: Արտազրության կապիտալիստական ձեւի զարգացումը կտրել է գյուղատնտեսական մանր արտադրության կենսական նյարդը: Այս գերջինն անհուսալիորեն քայլայվում և կործանվում ե: Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի և Հնդկաստանի մրցումը հեղեղել է յեվրոպական շուկան աժան հացով, աժան այն աստիճանի, վոր Յելկան առաջի և վոչ մի արտադրող այդ մրցմանը դիմանալ

չե կարող: Խոշոր կալվածատերը, ինչպես և մանը գյուղացին, յերկուսն ել հավասար չափով կործանման առաջնական կանոնած: Յեմ վորովհետեւն բանքի յերկուսն ել հողատերեր ու գյուղացիներ են, ուստի խոշոր կալվածատերը հրապարակ ե յենում՝ վորպես մանր գյուղացու շահերի պաշտպանության առաջամարտիկ, իսկ մանր գյուղացին՝ ընդհանուր առմամբ՝ ընդունում ե այդ առաջամարտիկին:

Սակայն ժամանակի ընթացքում Արևմուտքում աճել գարգացել ե մի հզոր սոցիալիստական բանվորական կուսակցություն: Փետրվարյան հեղափոխության շրջանին հատուկ շփոթ մտապատկերներն ու զգացումները պարզվել ընդհանվել և խորացել են մինչև մի ծրագիր, վորն ընդունակ ե բավարարելու գիտական բոլոր պահանջներին և վորը պարունակում ե վորոշ ու բոլորի համար ըմբանելի պահանջներ: Այդ պահանջները պաշտպանվում են գերմանական, ֆրանսական և բելգիական պառլամենտների սոցիալիստական պատգամավորների կողմից, վորոնց թիվը անընդհատ աճում է: Բայց քաղաքական իշխանության նվաճումը սոցիալիստական կուսակցության կողմից շատ մոտ ապագայի գործ ե դարձել: Բայց քաղաքական իշխանությունը նվաճելու համար այդ կուսակցությունը պետք ե, նաև, քաղաքից դյուզնա, պետք ե գյուղում մի ուժ դառնա: Նա, վոր գերազանցում ե բոլոր մյուս կուսակցություններին իր պարզ տեսակետով այն կապի մասին, վոր գյուղթյուն ունի տնտեսական պատճառների և դրանց քաղաքական հետևանքների միջև, վորն, ուրեմն, գյուղացիների աշներն բարեկամի վոչխարի մորթու տակ վաղուց արգեն ճանաչել ե խոշոր կալվածատերոջ գայլի գեմքը, — սոցիալիստական այդ կուսակցությունը կորսղ ե ար-

գյոք կործանման դատապարտված գյուղացուն հանդըս-
տորեն թողնել նրա կեղծ պաշտպանների ձեռքում,
մինչև վոր նա, այդ գյուղացին, արդյունաբերական
բանվորի պասսիվ թշնամուց նրա ակտիվ թշնամին
դառնա: Յեկ ահա, այդպիսով, մենք ընդհուպ կանգ-
նած ենք գյուղացիական հարցի առաջ:

I

Գյուղի բնակչության այն մասը, վորին մենք կա-
րող ենք դիմել, բաղկացած և շատ տարբեր տարբերից,
վորոնք իրենց հերթին իրարից մեծապես տարբերվում
են նաև ըստ առանձին վայրերի:

Արևմտյան Գերմանիայում, ինչպես Թրանսիայում
և Բելգիայում, գերիշխում ե թզուկային գյուղացիների
մասը արտադրությունը: Այդ գյուղացիները մեծամաս-
նությամբ իրենց փոքրիկ հողամասերի սեփականատե-
րերն են, իսկ փոքրամասնությամբ՝ հողը վերցնում
են կապալով:

Հյուսիսարևեմտյան մասում՝ ներքին Սաքսոնիա-
յում և Շլեզվիգ-Հոլշտայնում, զիսավորապես խոշոր
ու միջակ գյուղացիներ են, վորոնք առանց բատրակ-
ների ու աղախիների, նույնիսկ առանց որավարձ
բանվորների իրենց անտեսությունը վարել չեն կա-
րող. նույն գրությունն ե նաև Բավարիայի մի մա-
սում:

Արևելյան Պրուսիան և Մեկենքուրգը խոշոր հոգա-
տիբության և խոշոր արտադրության շրջաններ են,
վորտեղ տնտեսությունը տարբում ե ծառաների, բատ-
րակների և որավարձ բանվորների ձեռքով. մանր և
միջակ գյուղացիները համեմատաբար ավելի փոքր և
մշտապես նվազող տոկոս են կազմում:

Միջին Գերմանիայում գյուղություն ունեն սեփակա-
նության և արտադրության այդ բոլոր ձեերը, զանա-
զան հարաբերություններով խառնված՝ ըստ տեղի
պայմանների, առանց միկի կամ մյուսի վորոշ գերա-
կշության՝ մի լայն տարածության վրա:

Բացի զրանից, կան տարբեր ընդարձակությամբ
շրջաններ, վորտեղ սեփական կամ կապալով վերցրած
հողը չի բավարարում ընտանիքը կերպելու, այլ
միայն հիմք ե ծառայում տնային արդյունաբերության
համար, վորն ապահովում ե այլ կերպ անհասկանալի
մի ցածր աշխատավարձ և վորի շնորհիվ գյուղացու
աշխատանքի արդյունքը մշտական սպառում է գտնում,
չնայած ամեն ոտարերկրյա մրցման:

Գյուղի բնակչության այս խավերից վորոնք կա-
րող են սոցիալ-գեմոկրատական կուսակցության կողմը
գրավիլ: Հստինքյան պարզ ե, վոր այս խնդիրը մենք
հետազոտում ենք միայն ընդհանուր գծերով: Մենք
վերցնում ենք միայն սուր արտահայտություն ստա-
ցած ձեերը: Գյուղի բնակչության խառն խավերի
և միջին աստիճանների հետազոտության համար մեղ
պակասում ե տեղ:

Մկենք մանր գյուղացուց, վորն Արևմտյան Յեկ-
լրոպարի համար ընդհանրապես բոլոր գյուղացիներից
վոչ միայն ամենակարենը ե, այլև մեզ զրագեցնող
ամբողջ հարցի համար ամենավճառական մոմենտն ե
և ներկայացնում: Յեթե մեր զիրքը դեպի մանք
գյուղացին պարզորդ ե, ապա գրանով մենք ունենք
այն բոլոր հենակետերը, վորոնց ոգնությամբ կարող
ենք վորոշել մեր վերաբերմանքը կեպի գյուղի բնակ-
չության մյուս բաղկացուցիչ տարրերը:

Մանք գյուղացի ասելով՝ մենք պարզ նկատի ու-

Նենք մի փոքրիկ հողամասի սեփականատիբոջը կամ
վարձակալին, — զլխավորապես՝ առաջնին նրա այդ
հողամասն ավելի մեծ չե, քան նա սովորաբար ընդու-
նակ և ծագկելու իր սեփական ընտանիքի ոժերով, և
ավելի փոքր չե, քան ուահաննվում և նրա ընտանիքը
կերակրելու համար. Ուրեմն, այս մանր գյուղացին,
ինչպես և մանր արհեստավորը, մի աշխատավոր և,
վորս իր աշխատանքի միջոցների սեփականատեր և և
դրանով ել տարբերվում և արդի պրոլետարից, այ-
սինքն՝ արտադրության կործանված յեղանակի մի
մնացորդ եւ. Իր նախահայրերից՝ ճորտից, մյուլքա-
տուից և շատ բացառիկ դեպքերում ազատ գյուղա-
ցուց, վորը պարտավոր եր կալվածատիբոջը վորոշ
հարկեր վճարել կամ նրա համար վորոշ քանակի աշ-
խատանք կատարել, մանր գյուղացին տարբերվում և
յեռակի կերպով. Նախ՝ նրանով, վոր Ֆրանսական
հեղափոխությունը նրան ազատազրել և ավատական
տուրքերից և կալվածատիբոջ համար կատարվող ծա-
ռայություններից և ըստ մեծի մասին, համենայն
դեպս Հռենոսի ձախ ափին, նրա մշակած հողամասն
հանձնել և նրան վորպես ազատ սեփականություն:
Այսուհետեւ՝ նրանով, վոր մանր գյուղացին զրկվել և
ինքնավար մարկի (հողային համայնքի) պաշտպանու-
թյունից և նրան մասնակցելու հսարավորությունից,
զրկվել եւ, ուրիմն, հին համայնական մարկի հասույթ-
ների իր բաժնից. Մարկի համայնական հողերը մա-
սսամբ թալանեցին նախկին ֆեոդալ տերերը, մասսամբ
ել գյուղացին նրանցից զրկվեց շնորհիվ լուսավորված-
բյուրոկրատիկ որենսդրության, վորը հենվում եր
հոռմեական իրավունքի վրա Հետեանքն այն յեղավ,
վոր մանր գյուղացին անզոր դարձավ աշխատանքի

անասուններ պահել՝ առանց գրանց համար զրայից կեր
զնելու. Մարկի հողերից ոգտվելու հարավորությու-
նից զրկվել անտեսապես գերակշռում և ավատա-
կան պարտավորությունների վերացումը. Աշխատանքի
սեփական անասուններ պահելու հնարավորությու-
նից զուրկ գյուղացիների թիվը անընդհատ աճում է:
Յերբորդ տարբերությունն այն և, վոր արդի գյուղա-
ցին կորցրել և իր նախկին արտադրական զործունե-
յության կեսը. Իր ընտանիքի անդամների հետ միա-
սին առաջ նա իր սեփական հումույթից արտադրում
եր իրեն անհրաժեշտ արդյունաբերական արդյունք-
ների մեծագույն մասը. Մնացածը նրան մատակարա-
բում եյին հարեան գյուղացիները, վորոնք գյուղա-
տնտեսության հետ միասին զրադրում եյին նաև ար-
հետաներով: Դրանցից ստացվող արդյունքների համար
նա վճարում եր զլխավորապես իր աշխատանուի ար-
դյունքներով կամ համապատասխան աշխատանքով
(ծառայություններով): Ընտանիքն, առավել ևս գյուղը,
բավարարում եր ինքն իրեն, արտադրերով համարյա
ամեն ինչ վոր իրեն հարկավոր եր. Դա համարյա լիո-
վին նատուրալ տնտեսություն եր: Փողի պահանջ հա-
մարյա չեր գգացվում: Փողային տնտեսության և խո-
շոր արդյունաբերության մեջոցով կապիտալիստական
արտադրությունն այդ ամենին վերջ զրեց: Յեթե
գյուղացու զոյության հիմնական պայմաններից մեկը
մարկի համայնական հողերից ոգտվելու եր, մյուսը նրա
ոժանդակիչ արդյունաբերական աշխատանքն եր: Այս-
պիսով գյուղացին մշտապես ավելի ու ավելի
ցածր և զլորվում: Հարկերը, անբերիությունը, ժա-
ռանգության բաժանումները, դատական ծախսերը գյու-
ղացիներին մեկ առ մեկ վաշխառուի մոտ են քշում:

Պարտքերով ծանրաբեռնվելն ավելի ու ավելի ընդհանուր յերկույթ և դառնում, անընդհատ ավելի դժվարացնելով զյուղացիներից ամեն մեկի դրությունը Մի խոսքով, մեր մանր զյուղացին, ինչպես և արտադրության կործանված յեղանակի ամեն մի այլ մնացորդ, անխուսափելիորեն կործանման և դատապարտված: Նա ապագայի պրոլետարն եւ

Իրեւ այդպիսին, սոցիալիստական պրոպագանդին նա պետք և պատրաստակամությամբ ընդպուած գնար: Սակայն այստեղ զյուղացուն գեռես խանգարում և սիփականության զգացումը, վորը նրա մեջ խոր արմատներ և թողել ինչքան ավելի յեւ զժվարանում այն պայքարը, վոր նա մղում և իր վտանգված վոքրիկ հողամասը պաշտպանելու համար, նույնքան ուժգին հուսահատությամբ և կառչում նա այդ հողամասին, նույնքան ավելի նա սոցիալ-դեմոկրատի մեջ տեսնում և այնչափ վտանգավոր մի թշնամի, ինչքան վաշխառուի ու փաստարանի մեջ, քանի վոր սոցիալ-դեմոկրատը խոսում է հողային սեփականությունը հասարակությանը հանճնելու մասին: Սոցիալ-դեմոկրատիան ինչպես պիտի հաղթահարի այդ նախապաշարմունքը կործանվող մանր զյուղացուն նա ի՞նչ կարող և առաջարկել առանց ինքն իրեն զավաճանելու:

Այստեղ մենք գործնական հենակետ ենք գտնում մարքսիստական ուղղությանը հետեւող ֆրանսական սոցիալիստների ազգարարային ծրագրում, վորն այնքան ավելի մեծ ուշադրության և արժանի, վոր մանր զյուղացիական տնտեսության կլասիկ յերկրիցն և գաւլիս:

Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության առաջին ապրարային ծրագիրն ընդունվել է 1892 թվին—

Մարսելի համազումարում: Սեփականությունից զուրկ գյուղական բանվարերի (այսինքն բատրակների և որավարձով աշխատողների) համար այդ ծրագրով պահանջվում եւ աշխատավարձի մինիմում հաստատել վորի չափը վորոշում են արհեստական միությունները և համայնքների խորհուրդները. զյուղական արհեստագործական դատարաններ հիմնել վորոնց կաղմի կեօք բանվորներից պիտի լինի. համայնական հողի վաճառքն արգելել և պետական հողերը տալ կապալով համայնքներին, վերջիններիս պարտավորեցնելով իրենց տրամադրության տակ զանգող ամբողջ հողը—թե սեփականը և թե կապալով վերցրածը—տալ վարձով սեփականացուրի զյուղական բանվորների ընտանիքների ընկերություններին՝ համայնքի վերահսկողության տակ կոլեկտիվ ուժերով մշակելու համար, արգելելով վարձու աշխատանքի գործադրումը. ծերերի և հաշմանդամների համար կենսաթոշակ սահմանել՝ համապատասխան ծախսերը ծածկելով խոշոր հողատիրության վրա գրած հատուկ հարկից ստացվող յեկամուտներով:

Մաներ զյուղացիների համար, վորոնց թվում այստեղ հատկապի նկատի պիտի առնվեն նաև վարձակալները, ծրագիրը պահանջում եւ համայնքների միջոցով ձեռք բերել զյուղատնտեսական մեջենաներ և ինքնարժեքով դրանք վարձով տալ զյուղացիներին. հիմնել զյուղացիական ընկերություններ՝ պարարտացման նյութեր, դրենաժի խողովակներ, սերմացու և այլն ձեռք բերելու, ինչպես և իրենց անդամների աշխատանքի արդյունքները վաճառելու համար. վերացնել այն հարկը, վորը վճարվում է հողաբաժինները ձեռքից ձեռք անցնելու դեպքում, յեթե գրանց գինը

5000 Փրանկից ավելի բարձր չե. հիմնել ըստ իրանոդական որինակի միջնորդ զատարաններ, վորոնք իրավունք ունենային իջեցնելու չափազանց բարձր կապալվարձը և վորոշելու այն վարձակալների ու կիսումըների (métayers) վարձատրության չափը, վորոնք մինչև հողի ոգագործումից հրաժարվելու իրենց աշխատանքով բարձրացրել են այդ հողի արժեքը. վերացնել քաղաքացիական որենազրի 2102. րդ հոդվածը, վորը հողատիրոջն իրավունք և տալիս բերքի վրա արգելք դնելու. վարկատուներին զրկել չհաճած հացը գրավ վերցնելու իրավունքից. արգելել գրավ վերցնել դաշտային գործիքները, բերքը սերմացուն, պարարտացման միջոցները, աշխատող անառունները, մի խոսքով՝ այն ամենը վոր գյուղացուն անհրաժեշտ ե իր անտեսությունը վարելու համար. վերանայում վաղուց արդեն հնացած ընդհանուր հողային կաղաստը, իսկ մինչ այդ վրա տեղային վերանայումը ամեն մի համայնքում. վերջապես, ձրի գյուղատնտեսական միջնակարգ կրթություն և գյուղատնտեսական փորձակայաններ:

Ինչպես տեսնում ենք, հոգուտ գյուղացիության առաջարած պահանջները — հոգուտ բանվորների առաջարած պահանջների մասին առայժմ չենք խոսում՝ այնքան ել հեռու չեն գնում: Այլ յերկիրներում դրանց մի մասն արդեն իրականացված ե: Վարձակալական միջնորդ զատարանների համար պարզապես իրանդական որինակն ե մատանաշգում: Ֆյուղացիական ընկերություններն արդեն գոյություն ունեն մերձ. հոհնույան շրջաններում: Հողային կաղաստը վերանայումը վող Արևմտյան Յեփրաստյում մի մշտական բարի ցանկություն եղարձել վոչ միայն լիբերալների, այլև

բյուրոկրատների մոտ: Ծրագրի մնացած կետերը ևս կարող են իրականացվել, գոյություն ունեցող կապիտալիստական կարգերին վորեն եյական մշաս չպատճառելով: Այս նկուտողությունների նպատակը լոկ ծրագրի բնութագրումն ե. այդտեղ վորեն կշտամբանք չկա, ընդհակառակը:

Ֆրանսիայի ամենատարբեր շրջաններում կուսակցությունն իր այդ ծրագրով այնքան մեծ հաջողություն ունեցավ գյուղացիների մեջ, վոր, — ախորժակն ուտելու հետ միասին ե գալիս, — անհրաժեշտություն զգացվեց ծրագիրն ել ավելի հարմարեցնել գյուղացիների ճաշակին: Սակայն կուսակցությունն զգում եր, վոր այդպիսով վտանգավոր ուղի յե բռնում: Զիսախտելով ընդհանուր սոցիալիստական ծրագրի հիմնական սկզբունքները, ի՞նչպես կարելի յեր գյուղացուն ոգնել, — գյուղացուն՝ վոչ իբրև հետագայի պրոլետարի, այլ իբրև այսորվա սեփականատեր գյուղացու: Այս առարկությունը մեջտեղից վերացնելու համար գործնական նոր առաջարկներին ներածության ձևով թեորիական պատճառաբանություն տրվեց, վորը ձգտում եր ապացուցել թե մանր գյուղացիական սեփականության պաշտպանությունն արտադրության կապիտալիստական յեղանակի կողմից նրան սպառնացող կործանումից, սոցիալիզմի սկզբունքներին չի հակառած: Թեև իրենք հեղինակները կատարելապես հասկանում եին, վոր այդ սեփականության կործանումն անխուսափելի յե: Այժմ մենք հանգամանորեն քննության կառնենք այդ պատճառաբանությունն, ինչպես և ներկա տարվա սեպտեմբերին նանտի համագումարում ընդունած պահանջները:

Պատճառաբանությունն սկսվում ե այսպես,

«Նկատի առնելով, վոր համաձայն կուսակցության ընդհանուր ծրագրի բուն իմաստի՝ արտադրողները կարող են ազատ լինել միայն այն չափով, ինչ չափով վոր նրանք արտադրության միջոցների սեփականատերեր են».

«Նկատի առնելով, վոր արդյունաբերության բնագավառում արտադրության այդ միջոցները թեև արդեն կապիտալիստական կենտրոնացման մի այնպիսի աստիճանի յեն հասել վոր արտադրողներին կարող են վերադրածվել միայն համայնական կամ հասարակական սեփականության ձևով. բայց վոր այդ յերեսոյթը—համենայն գեղս արդի ֆրանսիայում—բնակչին չի նկատվում զյուղատնտեսության մեջ, վորտեղ, ընդհակառակը, հողը շատ ու շատ շրջաններում գենես անհատ արտադրողների ձեռքում ե գտնվում, վորպես նրանց անհատական սեփականություն».

«Նկատի առնելով, վոր թղուկային սեփականությունով հատկանշվող այդ դրությունը թեև անխուսափելիորեն դատապարտված ե անհետացման (est fatalement appelé à disparaître), սակայն սոցիալիզմը կոչված չե արագացնելու այդ անհետացումը, վորովհետև սոցիալիզմի խնդիրնե վոչ թե սեփականությունը զատել աշխատանքից, այլ ընդհակառակը՝ միացնել միենույն ձեռքում ամեն մի արտադրության այդ յերկու գործուները, վորոնց բաժանումը պրոլետարիատի դրության մեջ նետված աշխատավորների համար առաջացնում ե ստրկություն և թշվառություն».

«Նկատի առնելով, վոր յեթե, մի կողմից, սոցիալիզմի, պարտականությունն ե՝ խոշոր կալվածքների այժմյան դատարկապուտ աերերի սեփականադրկումից հետո այդ կալվածքները նորից հանձնել գյուղատնտեսական արտադրության բոլոր տարրերը, գյուղատնտեսական աշխատանքի բոլոր տեսակների ներկայացնեցիչներին, վորոնք զանազան իրավական տիտղոսների տակ մշակում են ազգային հողը, միացնել միենույն պայմանագրի շուրջը՝ ընդգետ ընդհանուր թշնամու, —կալվածատիրական ֆեոդալիզմի»:

վորներին ի սեփականություն համայնական կամ հասարական սեփականության ձևով, ապա, մյուս կողմից, նրա համար վոչպակաս հրամայողական պարտականություն ե՝ ինքնաշխատ գյուղացիների մանը հողային սեփականությունը պաշտպանել հարկերից, վաշիսուներից և նոր առաջացած խոշոր կալվածատերերի վոտնձգություններից».

«Նկատի առնելով, վոր այդ պաշտպանությունը նպատակահարմար և տարածել այն արտադրողների վրա, վորոնք մշակում են ուրիշների հողերը՝ վորպես վարձակալներ կամ կիսրարներ (métayers), և վորոնք, յեթե շահագործում են վարձու բանվորների, վորոնք չափով հարկադրված են այդ անելու շնորհիվ իրենց նկատմամբ իսկ գործադրվող շահագործման, —

«Այս ամենը նկատի առնելով, բանվորական կուսակցությունը, վորը, հակառակ անարխիստների, հասարակակարգի վերափոխման իր հույսերը վոչ թե կապում ե թշվառության աճման ու տարածման հետ, այլ աշխատանքի և ընդհանրապես հասարակության աղատագրումն սպասում հ գյուղի և քաղաքի բանվորների կազմակերպվածությունից ու նրանց միահամուռ ջանքերից, սպասում ե նրանց կողմից կառավարության և որենսգրության գրավումից, — բանվորական կուսակցությունն ընդունել ե հետեւյալ ադրաբային ծրագիրը, վորպեսզի կարելի լինի նրա միջոցով գյուղատնտեսական արտադրության բոլոր տարրերը, գյուղատնտեսական աշխատանքի բոլոր տեսակների ներկայացնեցիչներին, վորոնք զանազան իրավական տիտղոսների տակ մշակում են ազգային հողը, միացնել միենույն պայմանագրի շուրջը՝ ընդգետ ընդհանուր թշնամու, —կալվածատիրական ֆեոդալիզմի»:

Այժմ քննենք հանգամանորեն այս «նկատառութեաները»:

Նախ՝ Փրանսական ծրագրի այն դրույթը, համաձայն վորի արտադրողի աղատությունը յենթադրում է արտադրության միջոցների սեփականություն, հարկավոր ե լրացնել նրան անմիջապես հետևող մի այլ դրույթով, համաձայն վորի արտադրության միջոցների սեփականությունը հսարավոր ե միայն յերկու ձեռով. Կամ վորպես անհատական սեփականություն, վորպեսի ձեզ յերեք և վոչ մի տեղ արտադրողների վող մասսայի համար գոյություն չի ունեցած և արդյունաբերական առաջադիմության շնորհիվ որեցոր ավելի ու ավելի ամսնաբերին ե դառնում. կամ թե վորպես հանրային սեփականություն, այսինքն վորպես մի ձեւ, վորի նյութական և հոգեկան (intellektuelle) նախադրյայները կապիտալիստական հասարակության զարգացման ընթացքում արդեն ստեղծված են, և վոր ուրիմ պետք ե պայքարել արտադրության միջոցները հասարակական սեփականություն դարձնելու համար, ողաագործելով պրոլետարիատի տրամադրության տակ յեղած բոլոր միջոցները:

Արտադրության միջոցների հասարակական սեփականությունն այստեղ առաջադրվում ե, ուրեմն, վորպես միակ հիմնական նպատակ, վորի իրականացմանը պետք ե ձգտել. Յեզ այդ վերաբերում ե վոչ միայն արդյունաբերությանը, վորտեղ դրա համար հողն արդեն պատրաստված ե, այլ անտեսեանության բոլոր ճյուղերին, ուրիմն նաև գյուղատնտեսությանը. Համաձայն ծրագրի, անհատական սեփականությունը յերեք և վոչ մի տեղ բոլոր արտադրողների համար գոյություն չի ունեցած: Ահա ինչու և շնորհիվ այն հանգամանքի, վոր արդյու-

նաբերական առաջադիմությունն առանց այդ ել վերացնում ե անհատական սեփականությունը, նրա պահպանման մեջ սոցիալիզմը բնավլ շահագրգուված չե, այլ շահագրգուված ե նրա վերացման մեջ, վորովհետև վորտեղ և ինչ չափով այդ ձեզ գոյություն ունի՝ հասարակական սեփականությունը նա զարձնում ե անհնարին: Ծրագրի ոգնությանը դիմողը պետք ե նկատի ունենա նաև ծրագիրն իր ամբողջությամբ, վորը կարևոր փոփոխում ե մտցնում նանտում առաջ բերած դրույթի մեջ նրանով, վոր այդտեղ արտահայտած ընդհանուր պատմական ճշմարտությունն ընդունելի յե համարում լոկ այնպիսի պայմաններում, վորոնցում այժմ այդ ճշմարտություն կարող ե մնալ միայն Արևմտյան Յեկապայի և Հյուսիսային Ամերիկայի մեջ:

Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն այժմ այդ արտադրողներին վորեւե իսկական աղատությամբ չի ոժառում: Թաղաքներում արհեստն արդեն կործանված ե, իսկ Լոնդոնի նման խոշոր քաղաքներում նա արդեն նույնիսկ բոլորովին անհետացել ե և փոխարինվել խոշոր արդյունաբերությամբ, քրտնաքամ սիստեմով և այն վողորմելի արարածներով, վորոնք սնանկություններով են ապրում: Սեփական տընտեսություն ունեցող մանր գյուղացին վոչ ապատ ե և վոչ ապահովված իր մանր հողամասը կորցնելու վտանգից: Նա ինքն, ինչպես և նրա տունը, բակը, նրա մի-յերկու կտոր դաշտամասերը վաշխառուին են պատկանում: Նրա գոյությունն ավելի քիչ ե ապահովված, քան պրոլետարի գոյությունը, վորը գեթ յերեխնակի հանգիստ որեր ե վայելում, մի բան, վոր պարտքերից տանջվող այդ ստրուկին յերեք չի վիճակվում: Զնջեցեք քաղաքացիական որենգործի 2102-րդ հոդվածը,

որենքով ապահովեցեք, վոր արգելված և գյուղացու դաշտային գործիքները, անսառունները և այն գրավ վերցնել այնուամենայնիվ, անզոր կլինեք ապահովել նրա սեփականությունը, յերբ նա հարկադրված կլինի իր «հոժար կամքով» վաճառել իր անսառունները, հոգով ու մարմնով հանձնվել վաշխառուին և ուրախանալ, վոր այդպիսով հետաձգում ե իր կործանման մոմենտը: Զեր ամեն մի փորձը, վոր ուղղված ե գեպի մանր գյուղացու սեփականության պաշտպանությունը, պաշտպանում ե վոչ թե նրա ազատությունը, այլ նրա ստըրկության առանձնահատուկ ձևը. գրանով դուք ավելի յերկարատե եք գործնում այն զրությունը, վորի շըրջանակներում մանր գյուղացին վոչ ապրել ե կարողանում, վոչ մեռնել: Ահա ինչու ծրագրի առաջին կետին ապավիճելն այստեղ բոլորովին տեղին չե: Պատճառարանության մեջ ասված ե, վոր արտադրության միջոցներից մեկը, այն ե՝ հողը, արդի ֆրանսիայի շատ շրջաններում դեռևս գտնվում ե առանձին արտադրողների ձեռքում՝ վորպիս անհատական սեփականություն, իսկ սոցիալիզմի խնդիրն այն չե, վոր սեփականությունը բաժանի աշխատանքից, այլ ընդհակառակը, այն ե, վոր ամեն մի արտադրության այդ յերկու գործունները միացնի միենույն ձեռքերում: — Ինչպես վերը նշեցինք, վերջին դրույթն, այդքան ընդհանուր ձևակերպումով, վոչ մի գեղքում սոցիալիզմի խնդիրը կադալ չի կարող: Ընդհակառակը, սոցիալիզմի խնդիրն ե՝ արտադրության միջոցները դարձնել արտադրողների ընդհանուր սեփականություն: Բավական ե այս հանգամանքն աչքաթող անեւ վորպեսդի վերոհիշալ դրույթը մեզ ուղղակի այն սիամունքի մեջ դցի, վոր իբր թե սոցիալիզմը կոչված ե մանր գյուղացու այժմյան

կարծեցյալ սեփականությունն իր գաշտի նկատմամբ դարձնել նրա խսկական սեփականությունը, այսինքն՝ մանր վարձակալին դարձնել սեփականատեր, իսկ պարտքերի մեջ խեղզվող սեփականատիրովը դարձնել պարտքերից աղատ սեփականատեր: Իհարկե, սոցիալիզմը շահագրգոված ե նրանով, վոր գյուղացիական սեփականությունն իր այդ կեղծ տեսքով վերացվի, սակայն վերացվի վոչ այդ յեղանակով:

Համենայն գեպս, գործն այնտեղ ե հասել վոր պատճառաբանության մեջ ուղղակի հայտարարվում ե, թե սոցիալիզմի պարտականությունը, այն ե՝ նրա հրամայողական պարտականությունն ե՝ «ինքնաշխատ գյուղացիների մանր հողային սեփականությունը պաշտպանել հարկերից, վաշխառուներից և նոր առաջացած խոշոր կալվածատերերի վոտնագություններից»: Դրանով ծրագրի պատճառաբանությունը սոցիալիզմի համար հրամայողական պարտականությունն ե դարձնում իրականացնել այն, ինչ վոր նախորդ հողվածով հայտարարված ե վորպես անհնարին: Սոցիալիզմի վրա պարտականությունն ե զրգում «պահել» գյուղացիների թղուկային սեփականությունը, թեև հենց այդտեղ ել ասվում ե, վոր այդ սեփականությունն «անխուսափելի» իրուն զատապարտված ե կործանման: Հարկերը, վաշխառուները և նոր առաջացած խոշոր կալվածատերերն ուրիշ լինչ են ներկայացնում, յեթե վոչ լոկ գործիքներ, վորոնց միջոցով կապիտալիստական արտադրությունն իրագործում ե այդ անխուսափելի կործանումը: Թե այդ յերբորդությունից «սոցիալիզմը» գյուղացուն լինչ միջոցներով ե պաշտպանելու, այդ կտեսնենք մի քիչ հետո:

Սակայն միայն մանր գյուղացու սեփականությունը

չե, վոր պահանջվում ե պաշտպանել: Նույն չափով Շնպատակահարմար ե այդ պաշտպանությունը տարածել այն արտադրողների վրա, վորոնք մշակում են ուրիշների հողերը՝ վորպես վարձակալներ կամ կիրարարներ (métayers) և վորոնք, յեթե շահագործում են որպարձ բանվորների, վորոշ չափով հարկադրված են այդ անելու շնորհիվ իրենց նկատմամբ իսկ գործադրվող շահագործման: Այստեղ մենք մտնում ենք մի բոլորվին տարրինակ բնագավառ: Սոցիալիզմը միանգամայն հատուկ կերպով ուղղված ե վարձու աշխատանքի շահագործման դեմ: Իսկ այստեղ սոցիալիզմի հրաժայողական պարտականությունն ե հայտարարվում՝ միենույն ժամանակ պաշտպանել ֆրանսական վարձակալներին, վորոնք «շահագործում» են վարձու բանվորներին»—բառացի այսպես ե ասված: Յեթ այդ պատճառաբանվում ե նրանով, վոր վարձակալները վորոշ չափով հարկադրված են այդպես վարվելու «շնորհիվ իրենց նկատմամբ իսկ գործադրվող շահագործման»:

Ինչքան հեշտ ու հաճելի յե վար գլորվելը, յեթե արդեն թեք մակարդակի վրա յեք կանգնած: Յեթե հիմա գերմանական խոշոր ու միջակ գյուղացին դա և մեր ֆրանսական ընկերներին խնդրի՝ գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության խորհրդի առաջ միջամտել վորպեսզի խոշոր ու միջակ գյուղացուն այդ կուսակցությունը պաշտպանի՝ բատրակներին ու բատրակուհիներին շահագործելու բնագավառում, ընդլուրում այդ գյուղացին իր դիմումը պատճառաբանի՝ «իր նկատմամբ գործադրվող շահագործումով» վաշխառուների, հարկահավաքների, անասնավաճառների և հացի սղեկուլյանների կողմից:—ապա նրան ի՞նչ պատասխան կտան ֆրանսական սոցիալիստները: Յեկ

ով կարող ե յերաշխավորել վոր մեր խոշոր կարվածատեր-ազգարները կոմս Կանիցին նրանց մոտ չեն ուղարկի (չե վոր ֆրանսական սոցիալիստների առաջարկի նման մի առաջարկ ել կոմս Կանիցն ե մըտցրել հացի ներմուծումն աղգայնացնելու մասին) և նույնպես չեն ինդրի, վոր գյուղատնտեսական բանակորների շահագործման բնագավառում իրենց սոցիալիստական պաշտպանություն ցույց տրվի, պատճառաբաններով այդ դիմումը «իրենց նկատմամբ գործադրվող շահագործումով»՝ բորսայի, տոկոսների և հացի վաշխառուների կողմից:

Հենց այստեղ պետք ե ասել վոր մեր ֆրանսական ընկերները շատ հեռու յեն այնքան վատ բան մտածելուց, ինչպես այդ կարող ե թվալ: Հարցն այն ե, վոր վերը բերած հատվածը վերաբերում ե մի բոլորվին առանձնահատուկ գեպքի, այն ե՝ Հյուսիսային ֆրանսիայում, ինչպես և Գերմանիայի շաքարի ճականդեղի կուլտուրա ունեցող շրջաններում, հողը վարձով տրվում ե գյուղացիներին ճակնդեղի կուլտուրայով գրադիտելու համար՝ չափազանց ծանր պայմաններով: Ճակնդեղը նրանք պարտավորվում են վաճառել վորոշ գործարանների՝ այս վերջինների կողմից նշանակվող գներով: պարտավորվում են գնել վորոշ տեսակի սերմացու, գործածել վորոշ քանակի և նշանակած տեսակի պարաբռանյութեր: Բավական չե այս ամենը, ճակնդեղը հանձնելու ժամանակ ել նրանց ամենաանամոթ կերպով խարում են: Սյու նույնը մեզ լավ հայտնի յե Գերմանիայի պրակտիկայից: Յեթե այս տեսակ գյուղացիներն են պաշտպանության տակ առնվում, ապա պետք ե ուղղակի և վորոշակի կերպով այդ հանգամանքը շեշտավիր: Իսկ այնպես, ինչ-

ոլես այդ դրույթը ձևակերպված ե իր անսահման ընդհանրականությամբ, նա վոչ միայն ֆրանսական սոցիալիստական ծրագրի, այլև ընդհանրապես սոցիալիզմի հիմնական սկզբունքի խախտումն և ներկայացնում: Ահա ինչու նրա հեղինակները չեն կարող գանգատվել յեթե ամենատարերեր կողմերից այդ անփույթի խմբագրությունը շահագործվի հակառակ այն իմաստի, վոր իրենք հեղինակները դնում են նրա մեջ:

Նույն թյուրմացությունը կարող ե առաջացնել պատճառաբանության յեղափակիչ մասը, համաձայն վորի սոցիալիստական բանվորական կուսակցության խնդիրն և՝ «գյուղատնտեսական արտադրության բոլոր աարերերը, գյուղատնտեսական աշխատանքի բոլոր տեսակների ներկայացուցիչներին, վորոնք զանազան իրավական տիտղոսների տակ մշակում են ազգային հողը, միացնել միենույն պայքարի շուրջը՝ ընդդեմ ընդհանուր թշնամու, —կալվածատիրական փեղալիքամբ»: Յես վճռականորեն ժխտում եմ այն, թե իրը վորեև յերկրի սոցիալիստական բանվորական կուսակցություն նպատակ ունի իր գիրկն ընդունելու, բացի գյուղի պրոլետարներից և մանր գյուղացիներից, նաև միջակ ու խոշոր գյուղացիներին կամ նույնիմակ խոշոր կալվածքների վարձականներին, կապիտալիստ անառնարույժներին և ազգային հողի այլ մշակողներին: Ընդունում ենք, վոր այդ բոլոր աարերերի համար կալվածատիրական փեղալիքամբը կարող ե յերևան գալ վորպես մի ընդհանուր թշնամու, Մենք կարող ենք վորոշ հարցերում նրանց հետ միասին գնալ վորոշ նպատակների համար կարող ենք միաժամանակ նրանց հետ միասին կովել: Ճիշտ ե, մեր կուսակցության շարքերն ել հասարակական ամեն մի դասակար-

գից կարող ենք ընդունել պոանձին անհատների, սակայն կապիտալիստական, միջին բուրժուազիայի կամ միջն գյուղացիության շահերը հետապնդող խմբեր վոչ մի դեպքում ընդունել չենք կարող: Բայց այս կետի նկատմամբ ել այնքան վատ չե մտածված, ինչպես այդ կարող ե թվալ առաջին հայացքից: Ակներեւ ե, վոր այս բոլորի մասին հեղինակները բոլորովին չեն մտածել: Դժբախտաբար, նրանք համակված են ընդհանրացնելու տեսչով, և նման պայմաններում թող չզարմանան, վոր հատուցվում են ըստ իրենց խոսքերի:

Պատճառաբանությանը հետևում են ծրագրին ավելացրած նոր լրացումները, վորոնք նույնքան անփույթ կերպով են խմբագրված:

Այս կետը, վորի համաձայն համայնքները ձեռք են բերում գյուղատնտեսական մեքենաներ և այս վերջիններն ըստ իրենց ինքնարժեքի տալիս են վարձով գյուղացիներին, յենթարկված ե հետեւյալ փոփոխման: առաջին՝ այդ նպատակն իրականացնելու համար համայնքները պետությունից ստանում են ֆինանսական ոժանդակություն և յերկրորդ՝ համայնքները պարտավորում են մեքենաները արամադրել մանր գյուղացիներին ձրիաբար: Կասկածից դուրս ե, վոր մտածը գյուղացիներին այս նոր զիջումը վորեև շոշափելի ողնություն չի բերում, վորովհետեւ նրանց դաշտերն ու նրանց արտադրության յեղանակը մեքենաներ գուծադրելու համար շատ քիչ հնարավորություններ են ներկայացնում:

Այսուհետեւ պահանջվում ե. գյուղացիուն ունեցող անուղղակի և ուղղակի բոլոր հարկերը փոխարինել մի միասնական պրոգրեսիվ հարկով՝ այն բոլոր յեկամուտների նկատմամբ, վորոնք գերազանցում են 3000

Քրանկից:—Նման պահանջ տարիներից ի վեր գոյություն ունի համարյա բոլոր սոցիալ-դեմոկրատական ծրագրերում, բայց նորություն ե այն, վոր այդ պահանջը հատկապես առաջարրվում ե մանր զյուղացիների շահերը պաշտպանելու համար: Յեվ այս հաճախամանքը ցույց ե տալիս, թե գրա նշանակությունն ինչքան քիչ ե հասկացվել: Որինակի համար վերցնենք Անգլիան, վորի պետական բյուջեն կազմում ե 90 միլիոն ֆունտ ստերլինգ: Այդ գումարից 13,5-ից 14 միլիոնն ստացվում ե յեկամտային հարկից, մնացած 76 միլիոնի մի աննշան մասը՝ զանազան ձեռնարկների (փոստ, հեռագիր, կնիք) հարկումից, իսկ նրա խոշորագույն մասը՝ մասսայական սպառման առարկաների հարկումից, բոլոր քաղաքացիների և առավելապես չքավորների յեկամուտներից մշտապես կատարվող փերցնելու միջացուվ, վոր տեղի յե ունենում մանր, աննկատելի գումարներով, սակայն միատեղում ե շատ ու շատ միլիոններ: Յեվ պետք ե ասել վոր արդի հասարակության մեջ պետական ծախքերը մի այլ յեղանակով ծածկելը հազիվ թե հնարավոր լինի: Յենթադրենք, թե այդ 90 միլիոնը հավաքվում ե Անգլիայում ամբողջապես վորպես ուղղակի պրոգրեսիվ հարկ այն յեկամուտներից, վորոնք գերազանցում են 120 ֆունտ ստերլինգից, կամ 3000 ֆրանկից: Համաձայն Գրիֆֆենի տվյալների, Անգլիայի միջին տարեկան կուտակումը, նրա վորջ ազգային հարստության տարեկան աճումը 1865—1875 թվականներին կազմելիս ե յեղել 240 միլ. ֆ. ստ.: Ընդունենք, թե այդ գումարն այժմ հասել ե 300 միլիոնի: Այդ դեպքում 90 միլիոնի հասնող հարկային բեռը կլաներ կուտակման ամբողջ գումարի համարյա մի յերբորդ մասը: Այլ կերպ ասած, վոչ մի կառավա-

րություն, բայցի սոցիալիստականից, նման գործի ձեռնարկել չի կարող: Յեվ յերբ սոցիալիստները կառավարության զլուխ կանցնեն, նրանք այնպիսի գործեր կկատարեն, վոր հարկային այդ ոեփորմը կերեա վորպես միայն մի անցողիկ բոլորովին աննշան մասնավճարում, իսկ մասն գյուղացիների առջև բոլորովին այլ հեռանկարներ կբացվեն:

Ինչպես յերեւում ե, հեղինակներն իրենք ել զիսի յեն ընկնում, վոր գյուղացիները հարկային այդ ոեփորմին դեռ յերկար պիտի սպասեն, և այդ պատճառով նրանք «առայժմ» (en attendants) հետեւալ պահանջով են հուսավերում: «Հողային հարկի վերացում» ինքնաշխատ բոլոր գյուղացիների համար և այդ հարկի չափի նվազեցում հիպոտեկով ծանրաբեռնված բոլոր հողամասերի համար»: Այս պահանջի վերջին մասը կարող ե վերաբերվել միայն ավելի խոշոր գյուղացիական հողամասերին, վորոնց մշակումն ընտանիքի ուժերից վեր ե: Հետեւապես, պահանջի այդ մասն ես նպաստավոր ե այն գյուղացիների համար, վորոնք «վարձուբանվորներ են շահագործում»:

Հետո, «վորսի և ձկնորսության ազատություն առանց վորեւե սահմանափակումների, այն պայմանով միայն, վոր գետի վորսի կենդանիները, ձուկը և չընձած հացը խնայողական վերաբերմունք ցուցագրվի»:— Այս առենը հնչում ե իբրև մի շատ ժողովրդական պահանջ, սակայն դրա առաջին մասը վերացվում ե յերկրորդ մասով: Գյուղական ամբողջ տարածության վրա արդեն այսոր գյուղացիական ամեն մի ընտանիքի քանի նապաստակ, կաքավ, գայլածուկ և ծածան ե բաժին ընկնում: Միթե ավելի, քան ամեն մի գյուղացու կարելի կլինի տալ տարեկան մի աղաւուր վորսի և մեկը՝ ձկնորսության համար:

«Որենքով սահմանած, ինչպես և ըստ սովորույթի ընդունած տոկոսի նվազեցում», այսինքն, հակավաշխառուական որենքների կրկնության մի նոր փորձ՝ կիրառելու վոստիկանական այն միջոցառութմները, վորոնք յերկու հաղար տարի շարունակ միշտ և ամենուրեք անհաջողության են հանդիպել: Յեթե մանր գյուղացին ընկնի մի այնպիսի դրության մեջ, վոր վաշխառուի ոգնությանը դիմելը նրա համար չարիքներից փոքրագույնը հանգիստանա, ապա վաշխառուն միշտ ել նրա արյունը ծծելու միջոցներ կդունի, խուսափելով հակավաշխառուական որենքներից: Լավագույն դեպքում այդ միջոցառութմները կծառայեն վորպես մանր գյուղացուն հանգստացնելու միջոց, բայց նրան վորեւ ու գուտ չեն բերի: Ընդհակառակը, վարկավորման դորձն նրա համար կրթվարանա հենց այն ժամանակ, յերբ նա վարկի մեծագույն կարիք ունի:

«Զրի բժշկական ոգնություն և գեղորայքի մատակարարութինքնարժեքով»—համենայն դեպս սա գյուղացու պաշտպանությանը վերաբերող մի հատուկ միջոցառում չե: Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ծրագիրն ավելի հեռուն ե գնում, պահանջելով նաև դեղորայքի ձրի մատակարարում:

«Պահեստի զինվորների ընտանիքների ապահովութիւն ժամանակաշրջանում, յերբ նրանք ծառայության են կանչվում»—Գերմանիայում և Ավստրիայում արդեն գյուղուն ունի, թեև վերին աստիճանի անբավարար ձևով: Այս պահանջը ևս հատուկ գյուղացիական պահանջ չե:

«Պարարտանյութերի և գյուղատնտեսական մեքենաների ու արդյունքների տեղափոխման տարիքի իջեցում»—եյականում արդեն իրականացված և Գերմա-

նիայում, ընդվորում գլխավորապես կիրառվում ե հոգուտ... խոշոր կալվածատերերի:

«Անմիջապես ձեռնարկել նախապատրաստական աշխատանքի՝ մշակելու համար այն հասարակական աշխատանքների պլանը, վորոնք պահանջվում են հողը բարելավելու և գյուղատնտեսական արտադրությունը բարձրացնելու համար»—այս կետն ամեն ինչ անորոշության և գեղեցիկ խոստութմների լայն դաշտի մեջ ե դնում և կրկնի ամենից առաջ խոշոր կալվածատիրության շահերին և հասապատասխանում:

Մի խոսքով, բոլոր մեծադղորդ թերիական պատճառարանությունից հետո ազգարային նոր ծրագրի գործնական առաջարկները մեզ բնավ չեն բացատրում, թե Փրանսական բանվորական կուսակցությունն ինչպես պետք ե կարողանա ապահովել մանր գյուղացուն նրա թղուկային հողաբաժնի սեփականությունը, վորը—հենց այդ կուսակցության անելով—անխուսափելիորեն կործանման և գատապարտված:

II

Մեր Փրանսական ընկերներն անպայման արդարացի յեն հետեւյալ կետում: Ֆրանսիայում անհնարին և վորեւ տեական հեղաշրջում կատարել յեթե մանր գյուղացին զբան դիմ է: Սակայն, թվում ե ինձ, վոր գյուղացուն մոտենալու համար նրանք ճիշտ կետին չեն հենել լծակը:

Ինչպես յերեսում ե, նրանց համար յելակետ և ծառայում այն հույսը, թե մանր գյուղացուն կարելի յե նվաճել այսորվաղը, նույնիսկ արդեն առաջիկա ընդհանուր ընտրությունների համար: Սակայն նրանք կարող են

հուսալ այդ նոպատակին հասնելու միայն այն դեպքում, յեթե գյուղացիներին համարձակ և ընդհանուր բնույթ կրող խոստումներ տան, վորոնց պաշտպանության համար հարկադրված կլինեն շատ ավելի համարձակ թերթիական կշռադատումների ոգնության դիմելու, Հարցին ավելի մոտեկից ծանոթանալով, հայտնի յե դառնում, վոր ընդհանուր բնույթ կրող խոստումներն իրենք իրենց հակառակ են (որինակ, յեթե խոստանում են կանգուն պահել մի գրություն, վորը հենց իրենց կողմից հայտարարվում ե վորպես անխուսափելիորեն կործանման դատապարտված), իսկ առաջարկած առանձին միջոցառումները կամ վորեւ ազդեցությունից զուրկ են (հակավաշխառուական որենքները), կամ բանվորների ընդհանուր պահանջներ են ներկայացնում, կամ այնպիսի բնույթ են կրում, վոր նաև խոշոր կալվածատիւրության շահերին են ծառայում, կամ, վերջապես, միջոցառումներ են, վորոնց նշանակությունը մասնը զյուղացու շահերի պաշտպանության տեսակետից բնավ մեծ չե։ Հետևապես, ծրագրի զուտ գործնական մասն ինքնը ստիճանության ուղղում ե նրա սխալ ներածությունը և պատճառաբանության վտանգավոր յերեացող ու մեծագործ բառերը փաստորեն անմեղ չափի յե վերածում։

Կարող ենք ուղղակի հետեւյալ հայտարարությունն անել. քանի վոր մասն գյուղացիները համակված են նախապաշտպանումներով, վորոնք պայմանավորվում են նրանց վողջ տնտեսական գրությամբ, նրանց դաստիարակությամբ և կղզիացած կյանքով, և վորոնք նրանց մեջ ուժեղացվում են բուժուական մամուլի և խոշոր կալվածատիւրի կողմից, այդ մասն զյուղացիական մասսային մենք կարող ենք կարձ ժա-

մանակում մեր կողմը գրավել միայն այն դեպքում, յեթե նրան խոստումներ անենք, վորոնց մասին ինքներս գիտենք, վոր չենք կարող կատարել։ Այն ե, մենք նրանց պետք ե խոստանանք վոչ միայն բոլոր պարագաներում պաշտպանել նրանց սեփականությունը տնտեսական բոլոր ուժերի հարձակումից, այլև նրանց աղատագրել հենց այսոր նրանց վրա ծանրացող բեռից—վարձակալին դարձնել ազատ սեփականատեր, իսկ սեփականատերերի գրավ ըրած հողամասերն ազատել պարտքից, վճարելով նրանց փոխարեն այդ պարտքը։ Յեթե այդ մեզ հաշջողվեր, կըկին մենք կտանիվ յինք այնտեղ, վորտեղից անհրաժեշտորեն նորից այժմյան գրությունը կզարգանար։ Դրանով մենք գյուղացուն վոչ թե կազատագրեյինք, այլ լոկ կհետաձգեյինք նրա կործանման մոմենտը։

Բայց մեզ ձեռնտու չե գյուղացուն այսոր վաղը մեր կողմը գրավել, վորպեսզի նա մեղանից վաղը վյուս որը յերես գարձնի, հենց վոր պարզվի, վոր մենք չենք կարող կատարել տված խոստումները։ Մենք չենք կարող մեր կուսակցական ընկեր գարձնել զյուղացուն, վորի սպասելիքը մեղանից իր թզուկային սեփականության մշտնշենականացումն ե, ինչպես այդ չենք կարող անել մասն արհեստագործական վարպետի նկատմամբ, վորը ձգտում ե հավերժացնել իրեն՝ վորպես վարպետի։ Այսպիսի մարդիկ անտիսեմիտներին են պատկանում, վորոնց և թող դիմեն, ստանալով՝ նրանցից իրենց մասնը տնտեսությունը փրկելու խոստումներ։ Իսկ յերբ այնտեղ նրանք զործնականապես կիմանան, թե այդ փայլուն ֆրազների տակ ինչ և թագնված և ինչ յեղանակներ են նվազում այն ջութակները, վորոնց հնչյուններով թնդում ե անտիսեմիտական յերկինքը, նրանք այն ժամանակ մշտապես աճող բազմությամբ կհամոզ-

կեն, վոր ի վերջո մենք ավելի վստահելի մարդիկ ենք,
թեև պակաս խոստումներ ենք տալիս և նրանց փրկու-
թյունը բոլորովին այլ ուղղությամբ ենք վորոնում:
Յեթե ֆրանսացիներին վիճակված լիներ, ինչպես
այդ տեղի ունի մեր նկատմամբ, գործելու անտիսեմի-
տական աղմկարար դեմագոգիայի պայմաններում,
Նանտի սիալները նրանք դժվար թե կատարելին:

Արդ, ի՞նչ դիբք ենք բունելու մանր գյուղացիու-
թյան նկատմամբ: Նրա հետ ի՞նչպես պետք ե վարվենք
այն որը, յերբ պետական իշխանությունը կանցնի մեր
ձեռքը:

Նախ՝ անգայման ճիշտ ե ֆրանսական ծրագրի
այն կետը, համաձայն վորի մենք նախատեսում ենք
մանր գյուղացու անխուսափելի կործանումը, սակայն
բնավ կոչված չենք արագացնելու այդ կործանումը մեր
միջամտությամբ:

Եեվ յերկրորդ՝ նույնքան ակնհայտ ե, վոր պետական
իշխանությունը մեր ձեռքն անցնելուց հետո մենք
չենք կարող մտածել այն մասին, վոր մանր գյուղացին
բունի կերպով սեփականազուրկ արվի (անկախ նրանից,
թե դրա համար նա կստանա վարձատրություն թե վոչ),
ինչպես այդ ստիպված ենք անելու խոշոր կալվածա-
տերերի նկատմամբ: Մանր գյուղացու նկատմամբ մեր
անելիքն ամենից առաջ այն ե, վոր նրա մասնավոր
տնտեսությունը և մասնավոր սեփականությունը վե-
րածենք ընկերակցականի, ընդմորում այդ կատարենք
վոչ թե բոնի կերպով, այլ որինակի միջոցով և այդ
նպատակի իրականացման համար պահանջվող հասա-
րակական ոգնությամբ: Իհարեւ, այդ ժամանակ մեր
արամագրության տակ բավականաչափ միջոցներ կլի-
նեն, վորպեսզի գյուղացուն ապահովենք ոգուտներ, վո-

րոնք արդեն այժմյանից նրան պարզ պիտի լինեն:

Արդեն մոտ 20 տարի առաջ այս տեսակ պլաններ
եյին մշակել Դանիայի սոցիալիստները, վորոնց հայ-
րենիքում միայն մի իսկական քաղաք կա—Կոպենհա-
գենը,— և վորոնք ուրեմն այդ քաղաքից գուրս կարող
են պրոպագանդ մեկ միայն գյուղացիների շարք երում:
Մի գյուղի կամ ծիսի գյուղացիները — Դանիայում կան
խոշոր թվով անհատական տնտեսություններ — իրենց
հողամասերը պետք ե միացնելին և մի խոշոր կալվածք
դարձնելին, ընդհանուրի հաշվով մշակելին և արդյուն-
քը բաշխելին համաձայն յուրաքանչյուր մասնակցողի
հողամասի, մուծած գումարի և թափած աշխատանքի:
Դանիայում մանր հողատիրությունը միայն յեկըրդա-
կան գեր և կատարում: Բայց յեթե փորձենք այդ գա-
ղափարն իրագործել մի յերկրում, վորտեղ տիրապետու-
մեն թըուկային հողամասերը, ապա կգտնենք, վոր վեր-
ջիններս միացնելու և միացված ընդհանուր հողամասի
վրա խոշոր տնտեսություն կազմակերպելու գեպքում
մինչ այդ զբաղված աշխատուժերի մի մասն ափելորդ
և դառնում: Խոշոր արտադրության գլխավոր առավելու-
թյուններից մեկը հենց աշխատանքի այս խնայումն ե:
Այդ աշխատուժերի համար զբաղմունք գտնելու յերկու
ձանապարհ կա: Կամ գյուղացիական ընկերություն-
ներին լայնածավալ հողամասեր են տրամադրվում:
Կարելով այդ վերջինները հարևան խոշոր կալվածք-
ներից, կամ թե նրանց տրամադրվում են միջոցներ ու
ստեղծվում պայմաններ ոժմագույն արդյունաբերական
աշխատանք կազմակերպելու ըստ հնարավորության և
առավելապես սեփական գործածության համար: Յերկու
դեպքում ել նրանց համար ավելի բարելավված տնտե-
ղական գրություն և ստեղծվում և միաժամանակ ընդհա-
սական գրություն և ստեղծվում և միաժամանակ ընդհա-

Նուր հասարակական դեկավարությանն աղաճովում և
անհրաժեշտ ազգեցությունը՝ զյուղացիական ընկերու-
թյունն աստիճանաբար ավելի բարձր ձեփ փոխանցելու
և ամբողջ ընկերության, ինչպես և նրա առանձին
անդամների իրավունքներն ու պարտականությունները
հավասարեցնելու խոշոր հասարակական կոլեկտիվի
(der grossen Gemeinschaft) մեջ մտնող մյուս ճյուղերի
անդամների իրավունքներին և պարտականություններին Այս ծրագրի կիրառումը տվյալ ամեն մի
առանձին դեպքում կախված կլինի համապատասխան
տեղային պարագաներից և այն պայմաններից, վորոն-
ցում մենք կզրավենք հասարակական իշխանությունը:
Մենք, կարող և պատահեք վոր հնարավորություն
կունենանք այդ ընկերություններին դեռ ավելի լայն
ոգուտաներ ընձեռել որինակ, նրանց ամբողջ հողային
պարտքը շատ ցածր տոկոսներով հանձնել պետական
բանկին, խոշոր արտադրություն կազմակերպելու հա-
մար ավանսներ բաց թողնել հասարակական միջոցնե-
րից (ավանսները վոչ անդադան և զլխավորապես
փողով, այլև անհրաժեշտ պիտույքներով—մեքենանե-
րով պարարտանյութերով և այլն) և դեռ ուրիշ ոգուտ-
ներ:

Այս ամենը կատարելով, չպետք և մոռանար վոր
այսոր և առաջիկայում մեր զլխավոր խնդիրն և գյու-
ղացիներին հասկանալի դարձնել, վոր նրանց սեփա-
կանությունը, նրանց տունն ու հողամասը մենք կարող
ենք փրկել ու պահպանել միայն մի ճանապարհով—
վերածելով նրանց սեփականությունն ընկերակցական
սեփականության և նրանց արտադրությունն՝ ընկերակ-
ցական արտադրության: Չե վոր հենց անհատական
սեփականությունով պայմանավորվող անհատական

անտեսությունն ե, վոր գյուղացիներին մղում և զեղի
կործանում: Յեթե նրանք համառորեն պաշտպանեն
իրենց անհատական արտադրությունը, անից ու աելից
անխուսափելիորեն կարտաքսվեն, նրանց արտադրու-
թյան հնացած յեղանակը գուրս կմղի կապիտալիստա-
կան խաշոր արտադրության կողմից: Այս և իրերի զրու-
թյունը Յեկ ահա մենք հանդես ենք դալիս և գյուղաց-
ւների համար ստեղծում հնարավորություն՝ խոշոր ար-
տադրություն կազմակերպելու վոչ թե կապիտալի, այլ
իրենց սեփական, ընդհանուր հաշվով: Միթե չի կարելի
գյուղացիներին հասկացնել վոր այս ծրագրի կիրառումը
նրանց սեփական շահն ե, նրանց վեկության միակ մի-
ջոցն ե:

Վոչ այսոր և վոչ յերբեք մենք չենք կարող մանր
գյուղացիներին խոստանալ՝ կապիտալիստական ար-
տադրության գիրազանց ուժերի հանդեպ պահել նրանց
անհատական սեփականությունը և անհատական ար-
տադրությունը Նրանց մենք կարող ենք միայն խոսք
տալ՝ բռնի կերպով, հակառակ իրենց կամքի նրանց
գույքային հարաբերություններին չմիջամտել: Այսու-
հետև մենք կարող ենք հոգալ այն մասին, վորպեսզի
կապիտալիստների և խոշոր կալվածատերերի կողմից
ընդդեմ մանր գյուղացիների մղվող կոփման արդեն այ-
սոր հնարավորության չափ պակաս անարդարացի մի-
ջոցներով մղվի և վորպեսզի շատ հաճախ տեղի ունե-
ցող պարզ թալանն ու կեղեքումը հնարավորության
չափ արգելվի: Սակայն այդ բանը մեզ միայն բացա-
ռիկ դեպքերում կհաջողվի: Վոչ վոք չի իմանում, թե
արտադրության կապիտալիստական յեղանակի զար-
գացած պայմաններում վորաեղ և վերջանում աղնվու-
թյունը և վորտեղից են սկսվում խարերայությունն ու
կեղեքումը: Բայց միշտ ել մեծ տարբերություն կանի

այն հանգամանքը, թե արդյոք հասարակական իշխանությունը կեղեքիչների կողմն ե բռնում, թե կեղեքվողների: Իսկ մենք վճռականորեն մանր զյուղացու կողմն ենք կանգնած, մենք նրան ցույց կտանք ամեն մի հնարավոր ողնություն, վորպեսզի նրա վիճակն ավելի տանելի դարձնենք, վորպեսզի ավելի դյուրին դարձնենք նրա՝ ընկերակցության անցնելը, յեթե նա կորոշի այդ քայլն անել, վորպեսզի նրան իր փոքրիկ հողաբաժնի վրա նույնիսկ ավելի յերկար մտածելու հնարավորություն տանք, յեթե նա դեռ չի կարողանա ընկերակցության անցնելու վորոշումն ընդունել Մենք այդպես կվարվենք վոչ միայն այն պատճառով, վոր ինքնաշխատ մանր զյուղացուն իրոք մեզ պատկանող ենք համարում, այլև հաշվի առնելով մեր անմիջական կուսակցական շահը: Ինչքան ավելի մեծ կլինի այն զյուղացիների թիվը, վորոնց մենք կփրկենք պրոլետարիատի շարքերը գորվելու անխոռասփելիությունից, վորոնց ուրիշն կվարողանանք մեր կողմը զրավել գեռ վորպես գյուղացիների, այնքան հասարակական հեղաշրջումն ավելի արագ ու ավելի հեշտ կվատարվի: Մեզ համար չի կարող ձեռնտու լինել յեթե մենք այդ հեղաշրջումը կատարելու համար սպասենք մինչև այն որը, յերբ կապիտալիստական արտադրությունն ամենուրեք կհայտնաբերի իր զարգացման վերջին հետեւթյունները, յերբ արդեն վերջին մանր արհեստավորը և վերջին մանր զյուղացին ևս կապիտալիստական խոշոր արտադրությանը զոհ գնացած կլինին: Այն նյութական գոհողությունները, վոր այս իմաստով կարգեն հասարակական միջոցներից հոգուտ զյուղացիների, բութուական քաղաքատնտեսության տեսակետից կարող են յերեալ լոկ վորպես դեռ շպրտած փողը այնինչ

դրանք մի սքանչելի ներգրում են նշանակում, քանի վոր դրանց շնորհիվ թերևս կիսայլին տասնապատիկ ավելի խոշոր գումարներ՝ ընդհանրապես հասարակական վերակառուցման համար պահանջված ծախսերից: Հետեւապես, այս իմաստով զյուղացիների նկատմամբ մենք կարող ենք շատ առատաձեռն (liberal) լինել: Այսեղ մանրամասնությունների մեջ մտնելը և այդ ուղղությամբ վորոշ առաջարկները անելը տեղին չեն ներկա գեղգում խոսքը վերաբերում և միմիայն ընդհանուր հիմնական գծերին:

Այսաեղից հետեւում ե ուրեմն, վոր վոչ միայն կուսակցությանը, այլև հենց իրենց՝ մանր զյուղացիներին մենք չեյինք կարող ավելի վատթար ծառայություն մատուցել, քան յեթե մեր խոստումներով նրանց շարքերում գեթ խարուսիկ հույսեր առաջացնեյինք այն մասին, վոր թղուկային հողային սեփականությունը մտադիր ենք տեսականորեն պահպանել: Այդպես վարվելով, զյուղացիների առաջ մենք ուղղակի փակած կլինիների նրանց աղատագրման ճանապարհը, իսկ կուսակցությունը բարոյալես կստորացնեյինք մինչև աղմբկարար անտիսեմիտիզմի մակարդակը: Ընդհակառակը, մեր կուսակցություն պարտականությունն ե՝ զյուղացիների մեջ միշտ և անընդհատ պարզ տեսակետ տարածել այն մասին, վոր կապիտալիզմի տիրապետության պայմաններում նրանց զրությունը բացաձակապես անհուսալի յե, վոր բացարձակապես անհնարին պահպանել նրանց թղուկային սեփականությունը, վորպես այդպիսին, նրանց մեջ բացարձակ համոզմունք հաստատել այն մասին, վոր խոշոր կապիտալիստական արտադրությունը կանցնի նրանց անզոր ու հսացած մանր արտադրության վրայից և այն կճղմի, ինչպես

յերկաթուղու գնացքը ճզմում ե մի ձեռնասայլը: Այդպես վարվելով, մենք գործած կլինենք համաձայն տնտեսական զարգացման անխուսափելի որենքների, իսկ ինքն այդ զարգացումը գյուղացիների գլուխներում լայն տեղ կրանա մեր խոսքերի համար:

Սակայն ներկա հարցը յես չեմ կարող թողնել, չարտահայտելով իմ համոզմունքն այն մասին, վոր Նանտի ծրագրի հեղինակները ևս եյակ անում ինձ հետ միասին միենույն տեսակետին են: Նրանք այն աստիճանն կուրովամբ են, վոր չեն կարող չգիտակցել, վոր այժմ թղուկային հողաբաժններով ծածկված ամբողջ տարածությանը ևս վիճակված և ընդհանուրի սեփականության վերածվելու: Նրանք իրենք ել ընդունում են, վոր թղուկային սեփականությունը դատապարտված և վոչչացման: Լաֆարգի կաղմած և կուսակցության աղդային խորհրդի կողմից նախորդ համագումարին ներկայացրած զեկուցումը ևս լիովին հաստատում ե մեր այս կարծիքը: Այդ զեկուցումը գերմանիներն հրատարակված և Բեռլինի «Սոցիալ-զեմովրատի» ներկա 1894 թ. հոկտեմբերի 18-ի համարում: Նանտի ծրագրի՝ հակասություններով լի արտահայտության ձևերն արդեն վկայում են, վոր նրա հեղինակները փաստորեն այն չեն ասում, ինչ վոր մտադիր են ասելու: Յեթե նրանց միշտ կերպով չհասկանան և նրանց արտահայտություններն ի չարը գործադրեն, ինչպես այդ փաստորեն արդեն տեղի յեռնեցիր ապա այդ նրանց սեփական մեղքն ե, չամենայն դեպս մեր քրանչական ընկերները պետք ե իրենց ծրագիրը մանրամասն մեկնաբանեն. իսկ կուսակցության առաջիկա համագումարը պետք ե հիմնովին վերանայի այն:

Այժմ անցնենք ավելի խոշոր գյուղացիներին: Այս-

տեղ հանդիպում ենք անցման աստիճանների մի որինակելի քարտեղի, վորի վրա գտնում ենք տարբեր խավեր՝ թղուկային գյուղացուց սկսած մինչև խոշոր գյուղացին, վորը պահպանել և իր ամբողջ հին հողամասը և նույնիսկ զրանից դուրս նոր հողամասեր և ձեռք բերել: Այդ խավերի գյուղացիները զլխավորապես ժառանգներին անցնող հողերի բաժանման, ինչպես և պարտքերի կուտակման ու հողերի ստիպողական վաճառքի հետեւնք և: Վորտեղ միջակ գյուղացին թղուկային գյուղացիների մեջ և ապրում, իր շահերով ու հայացքներով նրանցից եյապես չի տարբերվում: Հենց միայն իր սեփական փորձը նրան կասի, թե իր նմաններից քանի քանին արդեն մանր գյուղացիների շարքերն են զլորվել իսկ վորտեղ միջակ ու խոշոր գյուղացիներն են գերակշռում և տնտեսությունն ընդհանրապես չի կարելի վարել առանց բատրակների ու բատրակունիների, այնտեղ իրերի բոլորին այլ գյուղացին կա: Բնական ե, վոր բանվորական կուսակցությունն առաջին հերթին պետք ե իր պաշտպանության տակ առնի վարձու բանվորներին, այն ե՝ բատրակներին, բատրակունիներին ու որավարձով աշխատողներին: Ինքնըստինքյան հասկանալի յի, վոր բանվորական կուսակցությունը չի կարող գյուղացիներին վոր և ի խոստումներ տալ վորոնց իրականացումը համադր ե բանվորների վարձու ստրկության շարունակության: Բայց քանի դեռ միջակ ու խոշոր գյուղացիները գյուղացինեն, իբրև այդպիսիք, առանց վարձու բանվորների նրանք չեն կարող ապրել Յեկ հետեապես, յեթե մենք պարզապես անմիտ քայլ կատարած կլիներինք, խոստանալով պահնովել թղուկային գյուղացիների հարատեկ գյուղացիները, իբրև թղուկային գյուղացիների, ապա

մենք համարյա ուղղակի դավաճանություն կատարած
կիբնեյինք, յեթե նույնը խոստանայինք խոշոր ու մի-
ջակ գյուղացիներին:

Այստեղ ևս կրկին մի զուգահեռ կա՛ համեմատած
քաղաքի արհեստավորի հետ: Թեև արհեստավորները
գյուղացիներից ավելի յեն քայլայվել բայց նրանց
շարքերում զեռևս կան այնպիսիները, վորոնց մոտ
աշակերտների հետ միասին յենթավարպետ-
ները (quesellen) ել են աշխատում կամ թե աշակերտ-
ները յենթավարպետների աշխատանք են կա-
տարում: Այդ արհեստավորների այն մասը, վորը ձբդ-
տում և հավերժացնել իր արդի դրությունը, թող անցնի
անտիսեմիտների կողմը, մինչև վոր կհամոզվի, վոր
այնտեղից վորեւ ոզնություն ստանալ չի կարող: Մնա-
ցած մասը, վորը գիտակցում է իր արտադրության յեղա-
նակի կործանման անխուսափելիությունը, թող անցնի
մեր կողմը, սակայն նաև պատրաստ լինի հետազոտում բա-
ժանելու այն վիճակը, վորն սպասում է բոլոր մյուս բան-
վորներին: Խոշոր ու միջակ գյուղացիների նկատմամբ ել
նույն դիրքը պետք է բոնել: Ինքնըստինքյան հաւ-
կանալի յե, վոր նրանց բատրակները, բատրակունե-
ները և որավարձով աշխատող բանվորները մեզ ավե-
լի յեն հետաքրքրում, քան նրանք իրենք: Յեթե այդ
գյուղացիներն իրենց արտադրության շարունակու-
թյան յերաշխիք են պահանջում, նրանց այդպիսի յի-
շաշխիք տալ մենք բնավ չենք կարող: Այդ զեպքում
նրանց տեղն անտիսեմիտների ու եկակցիոն գյուղացիական
միությունների և նման այլ կուսակցությունների մոտ է,
վորոնք հաճույքով ամեն ինչ խոստանում են, վորպեսզի
վոչինչ չկատարեն: Արդի տնահասական կյանքը մեզ համո-
զում է նրանում, վոր խոշոր ու միջակ գյուղացիները ևս

անխուսափելորեն կործանման են դատապարտված,
չդիմանալով կապիտալիստական տնտեսության և ան-
դըրովկյանոսյան աժան հացի մրցմանը: Նրանց այդ
վիճակի ապացույց են հանդիսանում պարտքերի անընդ-
հատ աճումը և իրենց՝ այդ գյուղացիների ակներկ
քայլայտմն ամենուրեք: Այդ քայլայման դեմ մենք
ուրիշ վոչինչ անել չենք կարող, բացի նրանից, վոր այդ-
տեղ ել կհանձնարարենք տնտեսությունների միացման
միջոցով անցնել ընկերակցական տնտեսությունների, վո-
րոնց շրջանակներում վարձու աշխատանքի շահագործու-
մըն ավելի ու ավելի կվերացվի և վորոնք աստիճանաբար
կարելի կլինի մտցնել ազգային մեծ արտադրական ըն-
կերակցություն մեջ վորպես հավասար իրավունքներով և
հավասար պարտականություններով ոժտված նրա ճյու-
ղերը: Յեթե այդ գյուղացիները գիտակցեն իրենց արտա-
դրության արդի յեղանակի կործանման անխուսափելիու-
թյունը և այստեղից անհրաժեշտորեն բղինող յեղակա-
ցությունը հանեն, այդ զեպքում նրանք կգան մեզ մոտ, և
մեր պարտականությունը կլինիարտադրությանն որ յե-
ղանակին անցնելը նրանց համար ևս հնարավորապես
զյուրացնել: Հակառակ զեպքում նրանց կթողնենք
իրենց բախտին և կդիմենք նրանց վարձու բանվոր-
ներին, վորոնց մոտ արդին համակրություն կգտնենք:
Բանի սեփականազրկումից այստեղ ել յերեխ կհրա-
ժարվենք, ընդլորում կարող ենք հուսար վոր տնտեսա-
կան զարգացումը նաև այդ պինդ գանգերը խելամտու-
թյան համար մատչելի կդարձնի:

Հարցը շատ պարզ բնույթ է կրում միայն խոշոր
կալվածատիրության նկատմամբ: Այստեղ գործ ունենք
չքողարկված կապիտալիստական արտադրության հետ,
վորի նկատմամբ վոչ մի կտսկած ծագել չի կարող: Այդ-

տեղ գործ ունենք զյուղատնտեսական պրոլետարիատի
 մի ստվար մասսայի հետ, վորի նկատմամբ մեր անեւ-
 թեք պարզ է: Հենց վոր մեր կուսակցությունը տիրա-
 նու պետական իշխանությանը, նա խոշոր կալվածա-
 տերերին պետք է առանց այլայլության սիփականա-
 զուրկ անի, ճիշտ այնպիս, ինչպես արդյունաբերական
 կապիտալիստներին: Իսկ թե արդյոք սեփականազըր-
 կումը հատուցումով թե առանց հատուցման կկատար-
 վի, այդ կախված կլինի գլխավորապես վոչ թե մեղա-
 նից, այլ իշխանությունը մեր ձեռքն առնելու պայ-
 մաններից և հատկապիս այն դիրքից, վոր կրոնն
 իրենք պ.պ. խոշոր կարվածատերերը: Հատուցումը բո-
 լոր պայմաններում մենք բնավ անթույլատըկի չենք
 համարում: Մարքսը,— վորքան հաճախ—արտահայտել
 ե ինձ իր կարծիքն այդ մասին, զտնելով, վոր հարցի
 լուծումը մեզ ամենից աժան կնստեր, յեթե հատուցման
 միջոցով մենք կարողանայինք ազատվել այդ ամբողջ
 ավազակախմբից: Սակայն մեզ այստեղ զբաղեցնողն
 այդ չե: Կարվածատերերի սեփականազըրկան միջոցով
 ընդհանուրին գերադարձած խոշոր կարվածքները
 մենք կհանձնենք այդ կարվածքներն այժմ մշակող և
 հետո ընկերակցությունների մեջ կազմակերպվելիք
 զյուղատնտեսական բանվորներին, վորոնք այդ հողերից
 կոգտին ընդհանրության վերահսկողությամբ: Իսկ ինչ
 վերաբերում ե ոզտագործման պայմաններին, այդ մա-
 սին այժմ վորոշակի վոչինչ ասել չի կարելի: Մի բան
 պարզ ե, վոր կապիտալիստական արտադրությունը
 հասարակականի վերածելու գործն այդտեղ արդեն լիո-
 վին նախապատրաստված ե և կարող ե կատարվել մի
 որվա ընթացքում, ճիշտ այնպիս, ինչպես այդ պրո-
 ցեսը տեղ կունենա, որինակի համար, պ. կրուպիկ

կամ պ. ֆոն-Շտումմի գործարաններում: Յեվ զյուղա-
 տնտեսական այս ընկերակցությունների որինակը կհա-
 մոզեր նաև դեռ դիմագրություն ցույց տվող վերջին
 մանր գյուղացիներին, յերեկի նաև խոշոր գյուղացինե-
 րի մի մասին՝ ընկերակցական խոշոր արտադրության
 առավելությունների մեջ:

Հետեւացես, զյուղատնտեսական բանվորների ա-
 ռաջ մենք այցտեղ կարող ենք հեռանկարներ բացել
 վլորոնք նույնքան փայլուն են, ինչքան և արդյունա-
 վերական բանվորներին գրավող հեռանկարները: Այդ
 պատճառով ել Արևելյան Պրուսիայի զյուղատնտեսա-
 կան բանվորների նվաճումը կարող ե մեզ համար մի-
 այն ժամանակի հարց լինել այն ել շատ կարճ ժամա-
 նակից: Իսկ յերբ Արևելյան Պրուսիայի զյուղատնտե-
 սական բանվորները մեր կողմը կանցնեն, ամբողջ
 գերմանիայում խկույն ուրիշ քամբներ կիշեն: Արե-
 գելյան Պրուսիայի զյուղատնտեսական բանվորների
 վելյան Պրուսիայի զյուղատնտեսական բանվորների
 վիճակն այն գլխավոր հիմ-
 քըն ե, վորի վրա հանգչում ե պրուսական յունկե-
 րության տիրապետությունը և միաժամանակ առանձնա-
 հատուկ պրուսական գերիշխանությունը Գերմանիա-
 յում: Արևելյան Պրուսիայի յունկերներն ավելի ու
 ավելի պարտքի մեջ ընկղմելով, աղքատացող, ի հաշիվ
 պետության և մասնավոր անձանց հացկատակությամբ
 ավրող և հենց այդ պատճառով իրենց իշխանությանն
 ավելի ու ավելի ուժգին կերպով կառչող այդ յուն-
 կերներն են, վոր ստեղծելու պահպանում են ըյուրու-
 կը կրատիայի և բանակի սպայության առանձնահատուկ
 պատճիայի բանակի պայությանը: Այդ յունկերների մեծա-
 պրուսական բնույթը: Այդ յունկերների մեծա-
 պտության, սահմանափակության և ամբարտակա-


նության շնորհիվ ե, վոր պլուսական ազգության գերմանական կայսրությունը—թեև նրա անխուսափելիությունը մեր ողբերի համար, վորպես ազգային միության այժմ միակ հնարավոր ձեր, կատարելապես ակներեւ և—վոր այդ կայսրությունը յերկրի ներսում այնքան առելի յե դարձել, իսկ արտօսահմանում—չնայած իր փառավոր հաղթանակներին, այնքան քիչ հարգանքի արժանի: Այդ յունկերների հզորության հիմքն այն ե, վոր հին պրուսական յոթ գավառներն ընդգրկող բովանդակ տարածության վրա, այսինքն կայսրության ամբողջ տարածության համարյամի յերսորդ մասում, նրանց ձեռքում և կենտրոնացած հողային սեփականությունը, վորից այդանու բղիում և նրանց հասարակական ու քաղաքական հզորությունը: Ըստվորում նրանք իշխում են վոչ միայն հողային սեփականության վրա, այլ իրենց ձեռքում կենտրոնացած շաքարի ու սպիրտի գործարանների միջոցով—նաև այդ շրջանի արդյունաբերության կարևորագույն հյուղերի վրա: Գերմանիայի միացած մասերում վոչ խոշոր կալվածատերերի և վոչ խոշոր արդյունաբերող ների համար այդքան նպաստավոր պայմաններ գոյություն չունեն: Սրանցից վոչ առաջինները և վոչ յերկրորդներն իրենց տրամադրության տակ մի այդպիսի ամրողական թագավորություն չունեն: Սրանք ցրված են ահագին տարածությունների վրա և հանուն տեսական և քաղաքական գերիշխանության մրցում են թե միմյանց հետ և թե իրենց շրջապատող հասարակական այլ տարրերի հետ: Սակայն պրուսական յունչափերով կորցնում ե իր տնտեսական պատվանդանը: Չնայած պետության կողմից յեղած ամեն տեսակի ոգ-

նության (իսկ Ֆրիզրիխ Ա-ից սկսած այդ ողնությունը յունկերական ամեն մի նորմալ ըյուջեյի մասն և կազմում), նրանք ևս ընկղմվում են պարտքերի մեջ և աղքատանում, անզոր լինելով դիմադրելու այդ պլույեսին: Խեղդվող յունկերությունը դեռ կարողանում է ջրի յերեսին մնալ, շնորհիվ միայն գյուղատնտեսական բանվորների փաստորեն կիսանորտային դրության, վորը արբագործված և որենազրության և սովորույթի կողմից և վորը հնարավոր և դարձնում այդ բանվորների անսահման շահագործումը: Տարածեցեք այդ բանվորների շարքերում սոցիալ-գեմոկրատական գաղափարների սերմերը, նրանց մեջ անվեհերություն և միաբանություն հաստատեցեք, վորպեսդի կարողանանալուպանել իրենց իրավունքները—և յունկերների տիրապետությունը չքանա: Այդ մեծ ուսակցիոն ուժը, վորը Դերմանիայի համար մի նույնքան բարբարութաճանական տարր և ներկայացնում, ինչքան և ուսական ցարկիղմն ամրող Յեկըլուպայի համար, կվիչի ինչպես մի ծակած փուչիկ: Պրուսական բանակի «ընտիր գնդերը» կդառնան սոցիալ-գեմոկրատական և գրադարձական գույնականությունը տեղախախտ կլինի (Machtverschiebung), ամրող մի հեղաշրջում իր արգանդում կրելով: Ահա ինչու Սրենելյան Պրուսիայի գյուղական պրոլետարներին մեր կողմը գրավելը շատ աղական աղջուկատարներին մեր կողմը գրավելը: Մեր վըճամիշակ գյուղացիներին մեր կողմը գրավելը:

4092

վորությունից: Յեկլ յեթե մեր կուսակցության տարածումը խափանելու համար—ինչպես մեզ սպառնում են—կդիմեն նոր բռնի միջոցների, ապա այդպես կվարդեն ամենից առաջ այն նպատակով, վոր Արևելյան Պրուսիայի գյուղական պրոլետարիատին մեր պրոպագանդից նպաշտպանեն: Դրանով նրանք մեր աշխատանքը կանգնեցնել չեն կարող: Այդ պրոլետարիատին մենք այնուամենայնիվ կնվաճենք:





«Ազգային գրադարան



NL0181397

31

ԳԻՒԸ 50 Կ

ЦЕНА 50 К



ФРИДРИХ ЭНГЕЛЬС
КРЕСТЬЯНСКИЙ ВОПРОС ВО
ФРАНЦИИ И ГЕРМАНИИ
Армпартнадат, Эреван